ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«20» ապրիլի 2021թ. № 197

# ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ԹԻՎ 83 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի հունիսի 13-ի թիվ 83 որոշման մեջ Արտուշ Սերոժայի Չոբանյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Սերյոժայի», հիմք ընդունելով Արտուշ Սերոժայի Չոբանյանի անձնագիրը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի հունիսի 13-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան փողոցի թիվ 6 շենքի 2 սենյականոց թիվ 29 բնակարանը կարիքավոր ընտանիքի հատկացնելու մասին» թիվ 83 որոշման 1-ին կետում նշված «Սերյոժայի» բառը փոխարինել «Սերոժայի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 20
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«21» ապրիլի 2021թ. № 198

## ԱՐՏՈՒՇ ՍԵՐՈԺԱՅԻ ՉՈԲԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 41-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի փետրվարի 6-ի թիվ 16 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 69 օրդերը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Արտուշ Սերոժայի Չոբանյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20042021-06-0025 վկայական՝ տրված 2021 թվականի ապրիլի 20-ին) «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց թիվ 6 բնակելի շենք» հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի 3-րդ հարկում գտնվող 66,17 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով երկու սենյականոց բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Արտուշ Սերոժայի Չոբանյանի ընտանիքին որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Արտուշ Սերոժայի Չոբանյան- ինքը՝ ծնված 1961 թվականին,

2) Լենա Խաչիկի Մաթոսյան - կինը՝ ծնված 1966 թվականին,

3) Արգամ Արտուշի Չոբանյան – տղան՝ ծնված 1985 թվականին,

4) Արամ Արտուշի Չոբանյան – տղան՝ ծնված 1988թվականին,

5) Սերյոժա Արտուշի Չոբանյան – տղան՝ ծնված 1997 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց, 6 շենք, բն. 29» հասցեն:

4. Հանձնարարել՝

1) աշխատակազմի գլխավոր մասնագետ Միշա Թամամյանին ապահովել սույն որոշման կատարումը:

2) աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 21
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«22» ապրիլի 2021թ. № 199

## ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1391892 վկայականը և Քաջայր Վորոտի Նիկողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Քաջայր Վորոտի Նիկողոսյանին վարձակալության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,008 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 44,3 քառակուսի մետր մակերեսով ավտոտեխսպասարկման կայանին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 68» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 22
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2021թ. № 200

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 27-Ա որոշումը և «Սարգիս Թամազյան Ռոբերտի» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 27-Ա որոշմամբ Սպիտակ համայնքի սեփականություն ճանաչված՝ Շվեյցարական թաղամասում գտնվող 06-006-0200-0005 կադաստրային ծածկագրով 0,0405 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին, դրա վրա գտնվող 56,73 քառակուսի ընդհանուր մետր մակերեսով բնակելի տանը, 60,59 քառակուսի ընդհանուր մետր մակերեսով նկուղին, 42,37 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբին, 22,61 քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկին և 5,64 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակին տրամադրել «ք.Սպիտակ, Շվեյցարական թաղամաս, թիվ 160» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 23
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլի 2021թ. № 201

## ԳԵՎՈՐԳ ԺՈՐԻԿԻ ԱԹՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26032021-06-0015 վկայականը և Գևորգ Ժորիկի Աթոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Ժորիկի Աթոյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Այգեստան փողոցի վրա գտնվող 06-006-0485-0046 կադաստրային ծածկագրով 0,086 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 06-006-0485-0046-001 կադաստրային ծածկագրով 92,7 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 06-006-0485-0046-002 կադաստրային ծածկագրով 7,6 քառակուսի մետր մակերեսով լոգարանին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան փողոց, թիվ 289» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 23
ք.Սպիտակ